



**ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԵՐԻ,  
ԿՈՅՈՒՂԱԳԾԵՐԻ, ՊՈՄՊԱԿԱՅԱՆՆԵՐԻ ԵՎ  
ՋՐԱՄԲԱՐՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ  
ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**

**Երկիր** Հայաստանի Հանրապետություն  
**Պատվիրատու** “Համայնքային զարգացման ծրագրի ղեկավարման գրասենյակ”ՊՆ/ Երևան Ջուր ՓԲԸ  
**Ժամկետ** Ապրիլ 2010թ. – Դեկտեմբեր 2011թ.

***Ծրագրի և կատարված ծառայության համառոտ նկարագիր***

Տեխնիկական վերահսկողության հիմնական նպատակն է եղել Խորհրդատուի կողմից պայմանագրային բոլոր պահանջների իրականացման երաշխավորումը՝ կապված հետևյալի հետ.

- նյութերի որակ,
- շինարարության որակ,
- աշխատանքային պլանին և ժամանակացույցին համապատասխանություն,
- շինարարական աշխատանքների իրականացում համաձայն նախագծային և պայմանագրային փաստաթղթերի, ինչպես նաև կիրառելի շինարարական նորմերի և ստանդարտների,
- նախագծային փոփոխությունների համաձայնեցում նախագծային ընկերության և Պատվիրատուի հետ; համապատասխան պայմանագրային փոփոխությունների պատրաստում և դրանց համաձայնեցում Պատվիրատուի և Կապալառուի հետ,
- իրականացված շինարարական աշխատանքների ընդունում համաձայն սահմանված ընթացակարգի և պայմանագրի պայմանների,
- կատարողական ակտերի ստուգում և հաստատում



***Ծրագրի նպատակը***

Ապահովել ջրագծերի, կոյուղագծերի, պոմպակայանների և շինությունների, քլորակայանների, էլեկտրամոնտաժային և ՕԿՋ-ների շինարարական աշխատանքների բարձր որակ

